

Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան
Կանանց նկատմամբ բռնության և
ընտանեկան բռնության
կանխարգելման և դրա դեմ
պայքարի մասին

Istanbul, 11.5.2011

The official languages of the Council of Europe are English and French (Article 12 of the Statute of the Council of Europe). Only the treaties published by the Secretary General of the Council of Europe, each in a separate booklet of the "European Treaty Series" (ETS) continued since 2004 by the "Council of Europe Treaty Series" (CETS), are deemed authentic. The translation presented here is for information only.

Նախաբ ան

Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունները և սույն Կոնվենցիան ստորագրող մյուս պետությունները,

Վերհիշելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ETS Հ-5, 1950թ.) և դրան կից արձանագրությունները, Եվրոպական սոցիալական խարտիան (ETS Հ-35, 1961թ., լրամշակված 1996թ., ETS Հ-163), Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների ծրագրի մասին կոնվենցիան (ETS Հ-197, 2005թ.) և Սեռական շահագործումից և սեռական ոտնձգություններից երեխաների պաշտպանության մասին Կոնվենցիան (ETS Հ-201, 2007թ.);

Վերհիշելով Նախարարների կոմիտեի Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին ուղղված հետևյալ հանձնարարականները՝ Հ-Rec(2002)5 Հանձնարարականը՝ “Բռնությունից կանանց պաշտպանելու մասին”, Հ-CM/Rec(2007)17 Հանձնարարականը՝ գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին, Հ-CM/Rec(2010)10 Հանձնարարականը՝ Հակամարտությունների կանխարգելման և լուծման և խաղաղության հաստատման ընթացքում կանանց և տղամարդկանց դերի մասին, և համապատասխան այլ հանձնարարականներ;

Հաշվի առնելով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի աճող նախադեպային իրավունքը, որով կարևոր չափորոշիչներ են ամրագրվում կանանց դեմ բռնության ոլորտում;

Հաշվի առնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (“ՄԻԴԱ”, 1979թ.) և դրա Կամրնտիր արձանագրությունը (1999թ.), ինչպես նաև “Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ” ՄԻԴԱ կոմիտեի Ընդհանուր բնույթի Հ-19 (1992) Հանձնարարականը, Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (1989թ.) և դրա Կամրնտիր արձանագրությունները (2000թ.) և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (2006թ.);

Հաշվի առնելով Միջազգային քրեական դատարանի Հռոմի Կանոնադրությունը (2002թ.);

Վերհիշելով միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունքները և հատկապես Ժնևի IV-րդ կոնվենցիան Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին (1949թ.) և դրան կից I-ին և II-րդ Լրացուցիչ արձանագրությունները (1977թ.);

Դատապարտելով կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերը;

Գիտակցելով, որ կանանց և տղամարդկանց միջև փաստական և իրավաբանական հավասարությունը վճռորոշ գործոն է հանդիսանում կանանց նկատմամբ բռնությունը կանխելու գործում;

Գիտակցելով, որ կանանց նկատմամբ բռնությունը իրենից ներկայացնում է կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար իշխանական հարաբերությունների դրսևորում, որոնք հանգեցրել են տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ գերիշխող դիրքի հաստատմանն ու խտրականության և կանանց լիարժեք առաջխաղացման արգելակմանը;

Գիտակցելով կանանց նկատմամբ բռնության որպես գենդերային հիմքով բռնության խորքային բնույթը, և այն, որ կանանց նկատմամբ բռնությունը հանդիսանում է այն կարևորագույն սոցիալական մեխանիզմներից մեկը, որոնց օգնությամբ կանայք ստիպված են լինում ենթակա դիրք զբաղեցնել տղամարդկանց նկատմամբ;

Գիտակցելով, խորը մտահոգությամբ, որ կանայք և աղջիկները հաճախ ենթարկվում են բռնության այնպիսի ծանր ձևերի, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը, սեռական հետապնդումը, բռնաբարությունը, հարկադիր ամուսնությունը, հանուն այսպես կոչված “պատվի” կատարվող հանցագործությունները և կանանց սեռական օրգանների խեղումը, որպիսի հանցագործություններն հանդիսանում են կանանց և աղջիկների մարդու իրավունքների ծանր խախտումներ և իրենցից ներկայացնում կանանց և տղամարդկանց միջև հավասարության հասնելու հիմնական խոչընդոտներից մեկը;

Գիտակցելով մարդու իրավունքների այն շարունակվող խախտումները, որոնք տեղի են ունենում քաղաքացիական բնակչության վրա ազդող զինված հակամարտությունների ընթացքում, հատկապես՝ կանանց նկատմամբ լայնորեն տարածված կամ սիստեմատիկաբար իրականացվող բռնաբարությունների և սեռական այլ բռնության տեսքով, ինչպես նաև՝ գենդերային հիմքով բռնության աճի հնարավորությունները ինչպես այդ հակամարտությունների ընթացքում, այնպես էլ դրանցից հետո;

Գիտակցելով, որ կանայք և աղջիկները, տղամարդկանց համեմատ, գտնվում են գենդերային հիմքով բռնության ավելի մեծ վտանգի տակ;

Գիտակցելով, որ ընտանեկան բռնությունը կանանց նկատմամբ դրևորվում է ոչ համաչափորեն, և որ տղամարդիկ նույնպես կարող են ընտանեկան բռնության զոհ հանդիսանալ;

Գիտակցելով, որ երեխաները ընտանեկան բռնության զոհ են հանդիսանում՝ այդ թվում նաև ընտանիքում բռնությանը ականատես լինելով;

Տենչալով ստեղծել այնպիսի Եվրոպա, որն ազատ կլինի կանանց նկատմամբ բռնությունից և ընտանեկան բռնությունից,

Համաձայնեցին հետևյալի մասին՝

Գլուխ I – Նպատակներ, սահմանումներ, հավասարություն և ոչ խտրական վերաբերմունք, ընդհանուր բնույթի պարտավորություններ

Հոդված 1 – Կոնվենցիայի նպատակները

1. Սույն Կոնվենցիայի նպատակներն են՝
 - ա. կանանց պաշտպանությունը բռնությունից, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը, քրեական հետապնդումը և վերացումը;
 - բ. կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանը նպաստելը և կանանց և տղամարդկանց միջև իրական հավասարության հաստատումը խթանելը, այդ թվում՝ կանանց իրավագործման միջոցով;
 - գ. կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր գոհերի պաշտպանության և նրանց աջակցություն տրամադրելու ուղղությամբ համակողմանի կարգավորումների, քաղաքականությունների և միջոցների մշակումը;
 - դ. միջազգային համագործակցության խթանումը՝ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը վերացնելու նպատակով;
 - ե. կազմակերպություններին և իրավապահ մարմիններին աջակցություն և օգնություն տրամադրելը՝ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը վերացնելու ուղղությամբ միասնական մոտեցումներ ձևավորելու համար արդյունավետ համագործակցելու նպատակով:
2. Մասնակից պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով, Կոնվենցիայով ստեղծվում է վերահսկողության հատուկ մեխանիզմ:

Հոդված 2 – Կոնվենցիայի գործողության շրջանակները

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վրա, ինչը ներառում է կանանց նկատմամբ ոչ համաչափորեն կիրառվող ընտանեկան բռնությունը:
2. Մասնակից պետություններին քաջալերվում է սույն Կոնվենցիան կիրառել ընտանեկան բռնության բոլոր գոհերի նկատմամբ: Մասնակից պետությունները, սույն Կոնվենցիայի դրույթներն իրականացնելիս, պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն գենդերային հիմքով բռնության կին գոհերին:
3. Սույն Կոնվենցիան կիրառվում է խաղաղության և զինված հակամարտությունների ժամանակ:

Հողված 3 – Սահմանումները

Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝

ա. “կանանց նկատմամբ բռնություն”՝ հասկացվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և պետք է ներառի գենդերային հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում;

բ. “ընտանեկան բռնություն”՝ նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում;

գ. “գենդերային պատկանելություն”՝ նշանակում է սոցիալական դերեր, վարքագծի տիպեր, գործունեության տեսակներ և հատկություններ, որոնք տվյալ հասարակությունը դիտում է որպես պատեհ կանանց և տղամարդկանց համար:

դ. “գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնություն”՝ նշանակում է այն բռնությունը, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն;

ե. “գոհ” կամ “տուժող”՝ նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, ով ենթարկվում է (ա) և (բ) կետերում նշված վարքագծի դրսևորման;

զ. “կանայք”՝ ներառում է նաև 18 տարին չլրացած աղջիկներին:

Հողված 4 – Հիմնարար իրավունքներ, հավասարություն և ոչ խտրական վերաբերմունք

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ յուրաքանչյուր անձի, հատկապես՝ կանանց, բռնությունից զերծ մասնավոր և հանրային կյանքով ապրելու իրավունքը ապահովելու և պաշտպանելու ուղղությամբ:
2. Մասնակից պետությունները դատապարտում են կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը և անհապաղ միջոցներ ձեռնարկում օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները այն կանխելու համար, մասնավորապես՝
 - իրենց սահմանադրություններում կամ համապատասխան այլ օրենսդրական ակտերում մարմնավորելով կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքը և ապահովելով այդ սկզբունքի գործնական իրացումը;

- արգելելով խտրականությունը, այդ թվում, անհրաժեշտության դեպքում՝ պատժամիջոցների կիրառման սպառնալիքի տակ;

- վերացնել կանանց նկատմամբ խտրական բնույթ կրող օրենսդրական ակտերն ու պրակտիկ երևույթները:

3. Մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիայի դրույթների կատարումը, մասնավորապես՝ գոհերի իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները, պետք է ապահովվեն առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, տարիքից, առողջական վիճակից, հաշմանդամության առկայությունից, ամուսնական դրությունից, միգրանտի կամ փախստականի կամ այլ կարգավիճակից :

4. Գենդերային հիմքով բռնությունից կանանց պաշտպանելուն և այն կանխելուն ուղղված այնպիսի հատուկ միջոցների ընդունումը, որոնք չեն վերաբերում տղամարդկանց, չի հանդիսանում խտրականության դրսևորման ձև՝ սույն Կոնվենցիայում օգտագործվող հասկացությունների համաձայն:

Հոդված 5 – Պետությունների պարտավորություններ և պատշաճ ջանասիրություն

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնպահ մնան կանանց նկատմամբ բռնության գործողություններից և ապահովեն, որպեսզի պետական մարմինները, պաշտոնատար անձինք, ներկայացուցիչները, ինստիտուտները և պետության անունից հանդես եկող այլ դերակատարներ գործեն սույն պարտավորությանը համապատասխան:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարված այն արարքները կանխելու, քննելու, պատժելու և հատուցելու ուղղությամբ, որոնք մտնում են սույն Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ:

Հոդված 6 – Գենդերային բաղադրիչ ունեցող քաղաքականություններ

Մասնակից պետությունները գենդերային չափումը պետք է ձեռնամուխ լինեն ներառելու սույն Կոնվենցիայի դրույթների կատարման և ներգործության գնահատման ընթացքում և պետք է խթանեն և արդյունավետորեն իրականացնեն կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովմանն ու կանանց իրավագործմանն ուղղված քաղաքականություններ:

Գլուխ II – Միասնական քաղաքականություններ և տվյալների հավաքագրում

Հոդված 7 – Համակողմանի և համակարգված քաղաքականություններ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ այն հաշվով, որպեսզի ընդունվեն և երկրի ամբողջ տարածքում իրականացվեն արդյունավետ, համակողմանի և համակարգված քաղաքականություններ, որոնք կներառեն սույն Կոնվենցիայի գործողության շրջանակներում գտնվող բնության բոլոր ձևերի դեմ պայքարի վերաբերելի բոլոր միջոցները, և որոնք ամբողջական արձագանք կհանդիսանան կանանց նկատմամբ բնության հանդեպ:
2. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի 1-ին մասում նշված քաղաքականությունները տուժողի իրավունքները դիտարկեն որպես բոլոր միջոցների կենտրոնում գտնվող և իրականացվեն բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, ինստիտուտների և կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով:
3. Սույն հոդվածի ներքո ձեռնարկված բոլոր միջոցառումները պետք է ընդգրկեն բոլոր շահագրգիռ դերակատարներին, ինչպիսիք են՝ պետական գերատեսչությունները, համապետական, տարածքային և տեղական խորհրդարանները և կառավարման մարմինները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Հոդված 8 – Ֆինանսական ռեսուրսներ

Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ հատկացնեն սույն Կոնվենցիայի առակա բնության բոլոր ձևերը կանխելու և դրանց դեմ պայքարի ուղղությամբ միասնական քաղաքականությունները, միջոցներն ու ծրագրերը համարժեքորեն իրականացնելու համար, այդ թվում՝ այնպիսիք, որոնք իրականացվում են հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կողմից:

Հոդված 9 – Հասարակական կազմակերպություններ և քաղաքացիական հասարակություն

Մասնակից պետությունները պետք է գնահատեն, խրախուսեն և խթանեն, բոլոր մակարդակներով, համապատասխան այն հասարակական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատանքը, որոնք ակտիվ են կանանց նկատմամբ բնության դեմ պայքարի գործում, և արդյունավետ համագործակցություն հաստատեն այդ կազմակերպությունների հետ:

Հոդված 10 – Համակարգող մարմին

1. Մասնակից պետությունները պետք է մեկ կամ մեկից ավելի մարմինների լիազորեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բնության բոլոր ձևերի

կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար մշակված քաղաքականությունների և միջոցների համակարգումը, իրականացումը, դիտարկումն ու գնահատումը կատարելու համար: Այս մարմինների կողմից համակարգվում է 11-րդ հոդվածում նշված տվյալների հավաքումը, ուսումնասիրությունը և տարածումը:

2. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի սույն հոդվածի համաձայն ստեղծված կամ լիազորված մարմինները ստանան VIII-րդ գլխով սահմանված կարգով ձեռնարկված միջոցառումների մասին ընդհանուր բնույթի տեղեկատվություն:

3. Մասնակից պետությունները ապահովում են, որպեսզի սույն հոդվածի համաձայն ստեղծված կամ լիազորված մարմինները հնարավորություն ունենան անմիջապես հաղորդակցվելու սույն Կոնվենցիային մասնակից այլ պետություններում իրենց գործընկեր մարմինների հետ և խթանելու նրանց հետ հարաբերությունները:

Հոդված 11 – Տվյալների հավաքում և հետազոտում

1. Սույն Կոնվենցիայի կատարման նպատակով, մասնակից պետությունները պարտավորվում են՝

ա. կանոնավոր պարբերականությամբ դասակարգված վերաբերելի վիճակագրական տվյալներ հավաքել սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բնության բոլոր ձևերի դեպքերի մասին;

բ. աջակցել հետազոտությունների անցկացմանը՝ հիմնախնդրի խորքային պատճառների և հետևանքների, դրսևորման դեպքերի և դատապարտումների տոկոսային հարաբերակցության, ինչպես նաև ի կատարումն սույն Կոնվենցիայի ձեռնարկված միջոցառումների արդյունավետության վերաբերյալ:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնամուխ լինեն կանոնավոր պարբերականությամբ անցկացնելու բնակչությունն ընդգրկող հարցումներ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բնության բոլոր ձևերի տարածվածությունն ու զարգացման տենդենցները գնահատելու համար:

3. Մասնակից պետությունները սույն Կոնվենցիայի 66-րդ հոդվածում նշված Անկախ փորձագիտական խմբին պետք է տրամադրեն սույն հոդվածի համաձայն հավաքված տեղեկատվությունը՝ միջազգային համագործակցությունը խթանելու և միջազգային ցուցիչների հիման վրա կատարողականի գնահատման հնարավորություն տալու նպատակով:

4. Մասնակից պետություններն պետք է ապահովեն, որպեսզի սույն հոդվածի համաձայն հավաքված տեղեկատվությունը մատչելի լինի հանրության համար:

Գլուխ III – Կանխարգելում

Հոդված 12 – Ընդհանուր բնույթի պարտավորություններ

1. Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ կանանց և տղամարդկանց վարքագծի սոցիալական և մշակութային վարվելակերպերում փոփոխություններ մտցնելու նպատակով՝ այն հաշվով, որպեսզի արմատախիլ արվեն այն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և մյուս բոլոր այն երևույթները, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կանխելու համար սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության ցանկացած դրսևորում որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:
3. Սույն գլխի համաձայն ձեռնարկվող բոլոր միջոցները պետք է հաշվի առնեն առանձին հանգամանքների բերումով խոցելի վիճակում հայտնված անձանց կարիքները և արձագանքեն դրանց և կենտրոնական տեղ հատկացնեն զոհերի մարդու իրավունքներին:
4. Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ քաջալերելու հասարակության բոլոր անդամներին, հատկապես՝ տղամարդկանց և տղաներին, ակտիվորեն նպաստելու սույն Կոնվենցիայի առարկա բռնության բոլոր ձևերի կանխարգելմանը:
5. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված “պատիվը” չվկայակոչվեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության որևէ գործողություն արդարացնելու համար:
6. Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ կանանց իրավագործմանն ուղղված ծրագրերը և գործողությունները խթանելու համար:

Հոդված 13 – Իրազեկության բարձրացում

1. Մասնակից պետությունները պետք է կանոնավոր հիմունքներով խթանեն կամ կազմակերպեն հանրային իրազեկման արշավների կամ ծրագրերի անցկացումը, այդ թվում, համապատասխան դեպքերում՝ համագործակցելով մարդու իրավունքների ներպետական ինստիտուտների և հավասարության հարցերով լիազոր մարմինների, քաղաքացիական հասարակության և ՀԿ-ների, հատկապես՝ կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի, երեխաների վրա դրանց ազդեցության և նման բռնությունը կանխելու անհրաժեշտության մասին ընդհանուր հասարակության իրազեկության և ընկալման մակարդակը բարձրացնելու նպատակով:

2. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողությունները կանխելու առկա միջոցների մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվի ընդհանուր հասարակության շրջանում:

Հոդված 14 – Կրթություն

1. Մասնակից պետությունները, հարկ եղած դեպքում, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ միջանձնային հարաբերություններում կանանց և տղամարդկանց միջև հավասարության, կարծրատիպերից զերծ գենդերային դերերի, փոխադարձ հարգանքի և վեճերը առանց բռնության լուծելու, կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հարցերով ուսումնական նյութերն ընդգրկվեն պաշտոնական ուսումնական ծրագրերում՝ կրթական բոլոր մակարդակներում և հարմարեցված լինելով ուսումնառողների զարգացող ընդունակություններին:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված սկզբունքները ոչ պաշտոնական կրթական հաստատություններում, սպորտային, մշակութային և ժամանցի հաստատություններում, ինչպես նաև՝ լրատվամիջոցներում խթանելու ուղղությամբ:

Հոդված 15 – Մասնագետների վերապատրաստում

1. Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ վերապատրաստում տրամադրեն կամ կատարելագործեն վերջինիս տրամադրումը սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր գործողությունների զոհերի և դրանք կատարողների հետ առնչվող համապատասխան մասնագետների համար այնպիսի հարցերով, ինչպիսիք են նման բռնության կանխարգելումն ու բացահայտումը, տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը, զոհերի կարիքներն ու իրավունքները, ինչպես նաև՝ թե ինչպես կանխել կրկնակի զոհականացումը:
2. Մասնակից պետությունները պետք է խթանեն, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասում նշված վերապատրաստումը նաև ներառի վերապատրաստումը համակարգված բազմագերատեսչական համագործակցության վերաբերյալ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության դեպքերի իրենց փոխանցված դեպքերի առթիվ համակողմանի և պատշաճ աշխատանք տանելու համար:

Հոդված 16 – Կանխարգելիչ միջամտության և ուղղման ծրագրեր

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ աջակցության այնպիսի ծրագրեր հիմնելու, կամ առկա այնպիսի ծրագրերին աջակցելու նպատակով, որոնք ուղղված կլինեն ընտանեկան բռնություն կատարողների կողմից միջանձնային հարաբերություններում բռնությունից զերծ վարքագիծ որդեգրելը սովորեցնելուն՝ հետագա բռնությունը կանխելու և բռնի վարվելակերպը փոխելու նպատակով:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ուղղման այնպիսի ծրագրեր հիմնելու, կամ առկա այնպիսի ծրագրերին աջակցելու նպատակով, որոնք ուղղված կլինեն մասնավորապես սեռական հանցագործություններ կատարած անձանց կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելուն:
3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված միջոցները ձեռնակելիս, մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի զոհերի անվտանգությունը, նրանց աջակցություն տրամադրելը և նրանց մարդու իրավունքները լինեն հիմնական մտահոգության առարկա և որպեսզի, անհրաժեշտության դեպքում, այս ծրագրերը մշակվեն և իրականացվեն զոհերին մասնագիտացված աջակցություն տրամադրող ծառայությունների հետ սերտ համագործակցելով:

Հոդված 17 – Մասնավոր հատվածի և լրատվամիջոցների մասնակցությունը

1. Մասնակից պետությունները պետք է խրախուսեն մասնավոր հատվածին, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտին և լրատվամիջոցներին, պատշաճ կերպով պահպանելով արտահայտվելու ազատությունն ու նրանց ինքնուրույնությունը, մասնակցելու համապատասխան քաղաքականությունների մշակմանն ու իրականացմանը, ուղեցույցների և ինքնակարգավորիչ չափորոշիչների ընդունմանը՝ կանանց նկատմամբ բռնության կանխելու և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքը բարձրացնելու նպատակով:
2. Մասնակից պետությունները, մասնավոր հատվածի դերակատարների հետ համագործակցելով, պետք է զարգացնեն և խթանեն երեխաների, ծնողների կամ ուսուցանողների համապատասխան հմտությունները կապված նրա հետ, թե ինչպես վարվել տեղեկատվական կամ հեռահաղորդակցման այնպիսի միջավայրի հետ, որը մատչելի է դարձնում սեռական կամ բռնի բնույթի նվաստացնող նյութերը, որոնք կարող են լինել վնասակար:

Գլուխ IV – Պաշտպանություն և օժանդակություն

Հոդված 18 – Ընդհանուր բնույթի պարտավորություններ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բռնության հետագա գործողություններից բոլոր տուժողներին պաշտպանելու նպատակով:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի, ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով, ստեղծվեն համապատասխան այնպիսի մեխանիզմներ, որոնք արդյունավետ համագործակցություն կապահովեն շահագրգիռ բոլոր գերատեսչությունների միջև, ներառյալ՝ դատական իշխանությունը, դատախազությունը, իրավապահ մարմինները, տեղական և տարածքային իշխանությունները, ինչպես նաև հասարակական կազմակերպություններն ու շահագրգիռ այլ կազմակերպություններն ու գերատեսչությունները սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության

ձևերի զոհերին և վկաներին պաշտպանություն և աջակցություն ապահովելու գործում, ներառյալ՝ սույն Կոնվենցիայի 20-րդ և 22-րդ հոդվածներում թվարկված ընդհանուր բնույթի և մասնագիտացված աջակցության ծառայություններին փոխանցելը:

3. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի սույն գլխի համաձայն ձեռնարկված միջոցները՝

- հիմնված լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերային ընկալման վրա և ուշադրության կենտրոնում պահեն զոհի մարդու իրավունքներն ու անվտանգությունը;

- հիմնված լինեն տուժողների, կատարողների, երեխաների և սոցիալական ավելի լայն միջավայրի միջև առկա փոխհարաբերություններն հաշվի առնող միասնական մոտեցման վրա;

- ուղղված լինեն կրկնակի զոհականացումից խուսափելուն;

- նպատակաուղղված լինեն բռնության կին զոհերի իրավագործմանն ու տնտեսական անկախության ապահովմանը;

- թույլ տան, որպեսզի, հնարավորության դեպքում, պաշտպանության և օգնության մի շարք ծառայություններ տեղակայված լինեն միևնույն շենքում;

- արտահայտեն խոցելի անձանց, այդ թվում՝ երեխաների հատուկ կարիքներին և հասանելի լինեն նրանց համար:

4. Ծառայությունների տրամադրումը չպետք է կախվածության մեջ դրվի տուժողի կողմից իր բողոքը պնդելու կամ կատարողի դեմ ցուցմունք տալու պատրաստակամության հանգամանքից:

5. Մասնակից պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ հյուպատոսական պաշտպանություն և այլ տեսակի աջակցություն ապահովելու իրենց քաղաքացիների կամ այլ զոհերի համար, ովքեր նման պաշտպանություն ստանալու իրավունք ունեն այդ մասնակից պետությունների կողմից միջազգային իրավունքի ներքո ստանձնած պարտավորությունների համաձայն:

Հոդված 19 – Տեղեկատվություն

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի տուժողները, իրենց համար հասկանալի լեզվով, համարժեք և ժամանակին տեղեկատվություն ստանան գոյություն ունեցող աջակցության և իրավաբանական ծառայությունների մասին:

Հոդված 20 – Օգնության ընդհանուր բնույթի ծառայություններ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի տուժողները կարողանան օգտվել բնությունից վերականգվելը հեշտացնող ծառայություններից: Այս միջոցները, անհրաժեշտության դեպքում, պետք է ներառեն ծառայությունների, մասնավորապես՝ իրավաբանական և հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, կացարանով ապահովելը, կրթությունը, վերապատրաստումը և աջակցելը աշխատանք գտնելու գործում:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի զոհերը հնարավորություն ունենալ դիմելու առողջապահական և սոցիալական ապահովության ծառայություններին, և որպեսզի այդ ծառայությունները հագեցած լինեն անհրաժեշտ ռեսուրսներով, իսկ դրանց մասնագետները վերապատրաստված լինեն տուժողներին աջակցություն տրամադրելու և նրանց դեպի համապատասխան ծառայություններն ուղղորդելու գործում:

Հոդված 21 – Աջակցություն անհատական/կոլեկտիվ բողոքներին

Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի տուժողները տեղեկացված լինեն անհատական/կոլեկտիվ բողոքարկման տարածաշրջանային և միջազգային առկա մեխանիզմների մասին և հնարավորություն ունենան օգտվելու դրանցից: Մասնակից պետությունները պետք է խթանեն տուժողներին նրբազգաց և բանիմաց աջակցության տրամադրումը այդ բողոքները ներկայացնելիս:

Հոդված 22 – Մասնագիտացված օգնության ծառայություններ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բնության բոլոր ձևերի զոհերին աշխարհագրական համարժեք ընդգրկում ունեցող անհապաղ, մասնագիտական աջակցության երկարաժամկետ և կարճաժամկետ ծառայություններ տրամադրելու կամ դրանց տրամադրումը կարգադրելու նպատակով:
2. Մասնակից պետությունները պետք է կանանց մասնագիտական աջակցության ծառայություններ տրամադրեն կամ կարգադրեն դրանց տրամադրումը բնության բոլոր զոհերի և նրանց երեխաների համար:

Հոդված 23 – Ապաստարաններ

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու համապատասխան, հեշտությամբ հասանելի և բավարար քանակի ապաստարանների ստեղծումը՝ զոհերի, հատկապես կանանց և երեխաների համար անվտանգ կացարան ապահովելու և նրանց նախահարձակ կերպով օգնություն տրամադրելու նպատակով:

Հոդված 24 – Օգնության հեռախոսահամարներ

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու առանց հանգստյան օրերի, շուրջօրյա ռեժիմով (24/7) գործող օգնության համապետական հեռախոսահամարների ստեղծում, որոնք խորհրդապահության կամ անանունության պատշաճ հիմունքներով, զանգահարողներին խորհրդատվություն կտրամադրեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բնության բոլոր ձևերի վերաբերյալ:

Հոդված 25 – Աջակցություն սեռական բռնության զոհերին

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու, ըստ անհրաժեշտության, բռնաբարության ճգնաժամային կամ սեռական բռնության ուղղորդման բավարար քանակությամբ և հասանելի կենտրոնների ստեղծումը՝ զոհերի համար դատաբժշկական և այլ փորձաքննություններ կատարելու, հետտրավմատիկ խնամք և խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Հոդված 26 – Պաշտպանություն և աջակցություն երեխա վկաներին

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի բռնության բոլոր զոհերին ծառայություններ և աջակցություն տրամադրելիս, պատշաճ կերպով հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բնության բոլոր ձևերին ականատես դարձած երեխա վկաների իրավունքներն ու պահանջմունքները:
2. Սույն հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցները պետք է ներառեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերին ականատես դարձած երեխա վկաների տարիքին համապատասխանող հոգեբանական խորհրդատվության տրամադրումը և պատշաճ կերպով հաշվի առնեն երեխայի լավագույն շահերը:

Հոդված 27 – Հաղորդումների ներկայացում

Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ խրախուսելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողությանն ականատես դարձած կամ նման գործողություն կատարված լինելու կամ դրա կրկնությունն ակնկալելու ողջամիտ հիմքեր ունեցող ցանկացած անձ այդ մասին հաղորդում ներկայացնի իրավասու մարմնին կամ կազմակերպությանը:

Հոդված 28 – Հաղորդումների ներկայացումը մասնագետների կողմից

Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որպեսզի ներքին օրենսդրությամբ որոշ մասնագետների համար նախատեսված խորհրդապահության կանոնները խոչընդոտ չհանդիսանան, համապատասխան պայմանների առկայությամբ, նրանց կողմից

իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին համապատասխան հաղորդումներ ներկայացնելու հնարավորության համար, եթե նրանք ողջամիտ հիմքեր ունեն կարծելու, որ կատարվել է սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության որևէ ծանր գործողություն և որ կարելի է ակնկալել նման բռնության նոր ծանր գործողությունների կրկնվելը:

Գլուխ V – Նյութական իրավունք

Հոդված 29 – Քաղաքացիական հայցեր և իրավունքի վերականգնման քաղաքացիաիրավական միջոցներ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կատարողի դեմ տուժողներին իրավունքի վերականգնման քաղաքացիաիրավական միջոցներ տրամադրելու համար:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների համաձայն տուժողներին իրավունքի վերականգնման միջոցներ տրամադրելու համար այն պետական մարմինների դեմ, որոնք չեն կատարել իրենց լիազորությունների շրջանակներում անհրաժեշտ կանխարգելիչ կամ պաշտպանիչ միջոցներ կիրառելու իրենց պարտականությունը:

Հոդված 30 – Փոխհատուցում

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի տուժողներն ունենան սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված ցանկացած հանցագործության կատարողից փոխհատուցում պահանջելու իրավունք:
2. Համարժեք պետական փոխհատուցում պետք է տրվի այն անձանց, ում պատճառվել է ծանր մարմնական վնասվածք կամ առողջության կորուստ՝ այն չափով, որ չափով պատճառված վնասը չի հատուցվել այլ աղբյուրներից, ինչպիսիք են՝ կատարողը և ապահովագրական կամ պետական ֆինանսավորում ունեցող առողջապահական կամ սոցիալական ծրագրերը: Սա մասնակից պետությունների համար խոչընդոտ չի հանդիսանում հատկացված փոխհատուցման դիմաց կատարողի դեմ ռեգրեսային պահանջ ներկայացնելու համար՝ պայմանով, որ պատշաճ կերպով հաշվի է առնվում տուժողի անվտանգությունը:
3. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն ձեռնարկված միջոցները պետք է ապահովեն փոխհատուցման տրամադրումը ողջամիտ ժամկետում:

Հոդված 31 – Խնամակալություն, այցելելության իրավունքներ և անվտանգություն

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի երեխաների նկատմամբ խնամակալության և այցելության իրավունքների վերաբերյալ

որոշումներ կայացնելիս հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության դեպքերը:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի այցելության կամ խնամակալության որևէ իրավունքի իրականացում չսպառնա զոհի կամ երեխաների իրավունքներին և անվտանգությանը:

Հոդված 32 – Հարկադիր ամուսնությունների քաղաքացիաիրավական հետևանքները

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի հարկադրանքի ներքո կնքված ամուսնությունները հնարավոր լինի ճանաչել վիճարկելի, առջինն կամ լուծված՝ առանց տուժողի համար ֆինանսական կամ վարչարարական անհարկի դժվարություններ ստեղծելու:

Հոդված 33 – Հոգեբանական բռնություն

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն դիտավորությամբ շարունակաբար կատարվող այն գործողությունները, որոնք հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լրջորեն խախտում են մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը:

Հոդված 34 – Հետամտում

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողությունները, որոնք այդ անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար:

Հոդված 35 – Ֆիզիկական բռնություն

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ կատարվող ֆիզիկական բռնության գործողությունները:

Հոդված 36 – Մեռական բռնություն, այդ թվում՝ բռնաբարություն

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարվող հետևյալ գործողությունները քրեականացնելու համար

ա. մեկ այլ անձի հետ, առանց այդ անձի համաձայնության, վազինալ, անալ և օտալ ճանապարհով թափանցելու միջոցով, մարմնի որևէ մասի կամ առարկայի միջոցով սեռական բնույթի գործողություն կատարելը;

բ. մեկ այլ անձի հետ, առանց այդ անձի համաձայնության, սեռական բնույթի այլ գործողություն կատարելը;

գ. անձին, առանց նրա համաձայնության, երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններ կատարելուն կամ ենթարկվելուն ստիպելը;

2. Համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնության հիման վրա, որպիսին պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում:

3. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասի դրույթները կիրառելի լինեն նաև այն արարքների նկատմամբ, որոնք կատարվում են ներկա կամ նախկին ամուսնու կամ գուգրնկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով:

Հոդված 37 – Հարկադիր ամուսնություն

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն դիտավորությամբ հարկադրելը:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի չափահասին կամ երեխային ամուսնանալուն հարկադրելու նպատակով այդ անձի քաղաքացիության կամ բնակության վայրի պետություն չհանդիսացող պետության տարածք մուտք գործելուն դիտավորությամբ գայթակղելը:

Հոդված 38 – Կանանց սեռական օրգանների խեղում

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար՝

ա. սեռական մեծ և փոքր շուրթերը և կլիտորը լրիվ կամ մասնակի անդամահատելը, կապելը կամ խեղման այլ գործողությունների ենթարկելը;

բ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ կնոջ ստիպելը կամ դրանց ենթարկվելու համար կին տրամադրելը;

գ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ աղջկա ստիպելը, դրդելը կամ դրանց ենթարկվելու համար աղջիկ տրամադրելը:

Հոդված 39 – Հղիության արհեստական դադարեցում կամ ստերիլիզացում կատարելուն հարկադրելը

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարված հետևյալ գործողությունների քրեականացումն ապահովելու համար՝

ա. կնոջ հղիության արհեստական դադարեցումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության:

բ. կնոջ կամ աղջկա բնականորեն վերարտադրելու կարողությունը կորցնելու նպատակով կամ դրան հանգեցրած վիրահատության կատարումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության և պրոցեդուրայի իմաստը հասկանալու:

Հոդված 40 – Մեռական հետապնդում

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը, պատժելի լինի քրեական կամ որևէ այլ սանկցիայի ներքո:

Հոդված 41 – Օժանդակություն, դրդում և փորձ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվեն սույն Կոնվենցիայի 33, 34, 35, 36, 37, 38(ա) և 39-րդ հոդվածներին համապատասխան նախատեսվող հանցագործությունների կատարմանը դիտավորությամբ օժանդակելը կամ դրդելը:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քրեականացվի սույն Կոնվենցիայի 35, 36, 37, 38(ա) և 39-րդ հոդվածներին համապատասխան նախատեսվող հանցագործությունների դիտավորությամբ կատարված փորձը:

Հոդված 42 – Հանցագործությունների անընդունելի արդարացումներ, ներառյալ՝ հանուն այսպես կոչված “պատվի” կատարվող հանցագործությունները

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության որևէ գործողության առթիվ հարուցված վարույթի ընթացքում՝ մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված “պատիվը” չդիտվեն որպես նման գործողությունների արդարացում: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել

են պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդութային նորմերը կամ սովորույթները:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի որևէ մեկի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված որևէ գործողություն կատարելուն որևէ երեխայի դրդելը չվերացնի այդ անձի քրեական պատասխանատվությունը կատարված գործողության համար:

Հոդված 43 – Քրեական օրենքի կիրառումը

Սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների նկատմամբ քրեական օրենքի կիրառումն իրականացվում է անկախ զոհի և կատարողի միջև եղած հարաբերության բնույթից:

Հոդված 44 – Իրավագործություն

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված յուրաքայտուր հանցագործության վրա իրենց իրավագործությունը տարածելու համար, եթե արարքը կատարվել է՝

ա. իրենց տարածքում, կամ

բ. իրենց դրոշի տակ գտնվող նավի վրա, կամ

գ. իրենց ներպետական օրենքների համաձայն գրանցված օդանավի կամ օդային այլ սարքի վրա, կամ

դ. իրենց քաղաքացիներից մեկի կողմից, կամ

ե. իրենց տարածում գլխավորապես բնակվող անձի կողմից:

2. Մասնակից պետությունները պետք է ձգտեն ձեռնարկել օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները իրենց իրավագործությունը սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված ցանկացած այնպիսի հանցագործության նկատմամբ տարածելու համար, որը կատարվել է իր քաղաքացի հանդիսացող կամ իր տարածքում գլխավորապես բնակվող անձի նկատմամբ:
3. Սույն Կոնվենցիայի 36-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ հոդվածների համաձայն նախատեսված հանցագործություններով քրեական հետապնդում իրականացնելու նպատակով, մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի իրենց իրավագործության առկայությունը պայմանավորված չլինի այդ արարքները դրանց կատարման տարածքում քրեականացված լինելու հանգամանքից:
4. Սույն Կոնվենցիայի 36-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ հոդվածների համաձայն նախատեսված հանցագործություններով քրեական հետապնդում իրականացնելու նպատակով, մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասի (դ) և (ե) կետերի հիմքով իրենց իրավագործության առկայությունը պայմանավորված չլինի այն պահանջի կատարմամբ, որի

համաձայն քրեական հետապնդումը կարող է իրականացվել միայն տուժողի կողմից հանցագործության մասին հաղորդում տալու կամ հանցագործության կատարման վայրի պետության կողմից տեղեկատվություն տրամադրելու դեպքում:

5. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ իրենց իրավագործությունը սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների նկատմամբ տարածելու համար՝ այն դեպքերում, երբ ենթադրյալ կատարողը գտնվում է իրենց տարածքում և իրենք չեն ցանկանում հանձնել նրան մեկ այլ մասնակից պետությանը՝ բացառապես նրա քաղաքացիության հիմքով:
6. Եթե սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված ենթադրաբար կատարված որևէ հանցագործության նկատմամբ իր իրավագործության առկայության մասին պնդում է մեկից ավելի մասնակից պետություն, ապա շահագրգիռ պետությունները, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցում են մեկը մյուսի հետ՝ քրեական հետապնդման իրականացման առավել պատշաճ ճանապարհն ընտրելու համար:
7. Առանց միջազգային իրավունքի ընդհանուր նորմերի ներգործությունը սահմանափակելու, սույն Կոնվենցիան չի բացառում որևէ մասնակից պետության քրեական օրենքի կիրառման որևէ իրավագործություն, որը վերջինս կիրացնի իր ներպետական օրենսդրության համաձայն:

Հոդված 45 – Մասնկցիաներ և այլ միջոցներ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի համապատասխան նախատեսվող հանցագործությունները պատժվեն արդյունավետ, համաչափ և զսպող սանկցիաներով, հաշվի առնելով դրանց ծանրությունը: Այս սանկցիաները պետք է ներառեն, ըստ անհրաժեշտության, ազատազրկման հետ կապված պատիժներ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել հանձնման հարցը:
2. Մասնակից պետությունները կատարողների նկատմամբ կարող են կիրառել այլ միջոցներ ևս, մասնավորապես՝
 - Դատապարտված անձանց վարքագծի դիտարկում կամ վերահսկողություն;
 - Ծնողական իրավունքներից զրկելը, եթե երեխայի լավագույն շահերը, որոնց թվում կարող է լինել տուժողի անվտանգությունը, չեն կարող երաշխավորվել այլ կերպ:

Հոդված 46 – Ծանրացուցիչ հանգամանքներ

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի հետևյալ հանգամանքները, այնքանով, որքանով դրանք արդեն իսկ չեն ազդել արարքի

որակման վրա, ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համաձայն հնարավոր լինի դիտել որպես ծանրացուցիչ հանգամանքներ՝ սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների համար պատիժ սահմանելիս

ա. եթե հանցագործությունը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից:

բ. եթե հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունները կատարվել են կրկին անգամ;

գ. եթե հանցագործությունը կատարվել է որոշակի հանգամանքների բերումով խոցելի վիճակի մեջ հայտնված անձի նկատմամբ;

դ. եթե հանցագործությունը կատարվել է երեխայի նկատմամբ կամ երեխայի ներկայությամբ;

ե. եթե հանցագործությունը կատարվել է միասնաբար գործող երկու կամ ավելի անձանց կողմից;

զ. եթե հանցագործությունը հետևել է ծայրահեղ բռնության գործադրմանը կամ զուգորդվել նման բռնություն գործադրելով;

է. եթե հանցագործությունը կատարվել է զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով;

ը. եթե հանցագործությամբ տուժողին պատճառվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս;

թ. եթե կատարողը նախկինում դատապարտվել է նմանատիպ բնույթի հանցագործություններ կատարելու համար:

Հոդված 47 – Այլ մասնակից պետության կողմից կայացված դատավճիռներ

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու, պատիժ նշանակելիս, սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով այլ մասնակից պետության ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատիժը հաշվի առնելու հնարավորությունը:

Հոդված 48 – Վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերի կամ պատժամիջոցների արգելում

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի հետ կապված վեճերի լուծման պարտադիր

այլնտրանքային ընթացակարգերն արգելելու համար, ներառյալ՝ հաշտարար և միջնորդ գործունեությունը:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի տուգանք վճարելու կարգադրության դեպքում պատշաճ կերպով հաշվի առնվեն կատարողի կողմից տուժողի նկատմամբ ունեցած իր ֆինանսական պարտավորությունները կատարելու հնարավորությունը:

Գլուխ VI – Քննություն, քրեական հետապնդում, դատավարական և պաշտպանության միջոցներ

Հոդված 49 – Ընդհանուր բնույթի պարտավորություններ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի դրսևորման դեպքերով նախաքննական ու դատական վարույթներն իրականացվեն առանց անհարկի ձգձգումների՝ միաժամանակ քրեական դատավարության բոլոր փուլերում հաշվի առնելով տուժողի իրավունքները:
2. Մասնակից պետությունները, մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին և բռնության գենդերային ընկալմանը համապատասխան, պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունն ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը կատարվեն արդյունավետ կերպով:

Հոդված 50 – Անհապաղ արձագանքում, կանխարգելում և պաշտպանություն

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի իրավապահ իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերին արձագանքեն անհապաղ անհապաղ և պատշաճ կերպով՝ տուժողների համար ապահովելով համարժեք և անհետաձգելի պաշտպանություն:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի իրավապահ պատասխանատու մարմինները անհապաղ և պատշաճ կերպով ներգրավված լինեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելմանն ու դրանցից պաշտպանություն տրամադրելուն, ներառյալ կանխարգելիչ գործուն միջոցների կիրառումը և ապացույցների հավաքումը:

Հոդված 51 – Ռիսկի գնահատում և ռիսկի կառավարում

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի բոլոր շահագրգիռ մարմինները կատարեն մահ պատճառելու ռիսկի, իրավիճակի լրջության և

բռնության կրկնվելու ռիսկի գնահատումը՝ համապատասխան ռիսկը կառավարելու և անհրաժեշտության դեպքում համակարգված ձևով անվտանգություն և աջակցություն ապահովելու համար:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասում նշված ռիսկի գնահատման ընթացքում քննության յուրաքանչյուր փուլում և պաշտպանության միջոցներ կիրառվելու յուրաքանչյուր դեպքում պատշաճ կերպով հաշվի առնվի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողություններ կատարողների մոտ հրազենի առկայության կամ դրա մատչելիության փաստը:

Հոդված 52 – Արգելափակող արտակարգ կարգադրություններ

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի իրավասու մարմինները, վերահաս վտանգի առկայության պայմաններում, լիազորված լինեն կարգադրելու, որպեսզի ընտանեկան բռնություն կատարողը բավարար ժամանակով հեռանա տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի բնակարանից կամ արգելելու կատարողին, որպեսզի նա վերադառնա կամ շփում ունենա տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի հետ: Սույն հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցները պետք է նախապատվությունը տան տուժողների կամ վտանգի տակ գտնվող անձանց անվտանգությունը:

Հոդված 53 – Արգելող կամ պաշտպանության կարգադրություններ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի տուժողների համար առկա լինի արգելող կամ պաշտպանության համապատասխան կարգադրությունների արձակման հնարավորությունը:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասում նշված արգելող կամ պաշտպանության կարգադրությունները՝
 - Հնարավոր լինի արձակել անհապաղ պաշտպանություն տրամադրելու համար և որպեսզի դրանցից հնարավոր լինի օգտվել առանց տուժողի համար անհարկի ֆինանսական կամ վարչական խոչընդոտներ հարուցելու;
 - արձակված լինեն կոնկրետ ժամանակով կամ ընդհուպ մինչև դրա փոփոխումը կամ գործողության ժամկետը լրանալը;
 - անհրաժեշտության դեպքում՝ արձակված լինեն *ex parte* կարգով և ուժի մեջ մտնեն անհապաղ;
 - հնարավոր լինի արձակել այլ վարույթներից անկախ կամ ի լրացումն այլ վարույթների;

- թույլատրելի լինեն՝ ապագա վարույթների ընթացքում ներկայացվելու համար:

3. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասի համաձայն արձակված արգելող կամ պաշտպանության կարգադրության պահանջների խախտումները պատժելի լինեն քրեական կամ իրավական բնույթի այլ արդյունավետ, համաչափ և զսպող պատժամիջոցներով:

Հոդված 54 – Քննություն և ապացույցներ

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի քաղաքացիական կամ քրեական ցանկացած դատավարության շրջանակներում տուժողի սեռական վարքագծի և սեռական հարաբերությունների անցյալի հետ կապված ապացույցները թույլատրելի ճանաչվեն կամ գնահատվեն միայն այն դեպքերում, երբ դրանք վերաբերելի են գործին և անհրաժեշտ:

Հոդված 55 – Ex parte և ex officio ընթացակարգեր

1. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի հանցագործությունն ամբողջությամբ կամ դրա մի մասով իրենց տարածքում կատարվելու դեպքում, սույն Կոնվենցիայի 35, 36, 37, 38 և 39-րդ հոդվածների համաձայն նախատեսված հանցագործությունների քննությունն ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը լիովին կախված չլինեն տուժողի կողմից հաղորդում կամ բողոք ներկայացնելու փաստից, և որպեսզի արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող վարույթներն հնարավոր լինի շարունակել անգամ տուժողի կողմից իր ցուցմունքներից կամ բողոքից հրաժարվելու դեպքում:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ իրենց ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելու համար, որպեսզի պետական մարմիններն ու հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ընտանեկան բռնության ոլորտի խորհրդատուները հնարավորություն ունենան աջակցելու/օգնելու տուժողներին՝ վերջիններիս խնդրանքով, սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ նախաքննական և դատական վարույթների ընթացքում:

Հոդված 56 – Պաշտպանության միջոցներ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ տուժողների իրավունքները և շահերը նախաքննական և դատական վարույթի բոլոր փուլերում պաշտպանելու նպատակով, ներառյալ՝ նրանց որպես վկաների ունեցած հատուկ կարիքները, մասնավորապես

ա. տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին և վկաներին՝ պաշտպանելով ճնշումներից, վրեժխնդրությունից և կրկնակի զոհականացումից;

բ. ապահովելով, որպեսզի տուժողները տեղեկացվեն կատարողին ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ արձակելու կամ վերջինիս փախուստի մասին՝ առնվազն այն դեպքերում, երբ տուժողի կամ նրա ընտանիքի անդամներին կարող է սպառնալ վտանգ:

գ. տեղեկացնելով նրանց, ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններում, իրենց ունեցած իրավունքների և իրենց տրամադրության տակ եղած ծառայությունների, իրենց բողոքների քննության ընթացքի, հարուցված մեղադրանքների, ընդհանրապես նախաքննական կամ դատական վարույթի ընթացքի, իրենց ունեցած դատավարական դերի, ինչպես նաև իրենց գործի էլքի մասին:

դ. հնարավորություն տալով տուժողներին, ներպետական քրեադատավարական օրենքով սահմանված կարգով, արտահայտելու իրենց տեսակետը և ներկայացնելու ապացույցներ և ապահովելով նրանց տեսակետները, կարիքները և մտահոգություններն անձամբ կամ միջնորդ անձի միջոցով քննարկման առարկա դարձնելու հնարավորությունը:

ե. տուժողներին աջակցության համապատասխան ծառայություններ տրամադրելով՝ այն հաշվով, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը ներկայացվեն և հաշվի առնվեն պատշաճ կերպով:

զ. ապահովելով տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կամ տուժողի նկարագիրը պաշտպանելուն ուղղված միջոցներ նախատեսելու հնարավորությունը:

է. ապահովելով, հնարավորության դեպքում, նախաքննության մարմնի գտնվելու վայրում կամ դատարանում տուժողների և կատարողների միջև շփումների բացառումը:

ը. ապահովելով անկախ և ձեռնահաս թարգմանիչներ՝ թե այն դեպքերում, երբ տուժողը հանդիսանում է դատավարության կողմ, և թե այն դեպքերում, երբ նա տալիս է ցուցմունքներ:

թ. տուժողների տալով, ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց դատական նիստին ներկայանալու կամ առնվազն դատական նիստից ենթադրյալ կատարողի բացակայության պայմաններում, ցուցմունք տալու հնարավորություն, մասնավորապես՝ հնարավորության դեպքում, հաղորդակցման համապատասխան տեխնոլոգիաների օգտագործմամբ:

2. Կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության տուժող կամ վկա երեխաներին, համապատասխան դեպքերում, պետք է տրամադրվեն պաշտպանության հատուկ միջոցներ, որոնք հաշվի կառնեն երեխայի լավագույն շահերը:

Հոդված 57 – Իրավաբանական օգնություն

Մասնակից պետությունները պետք է, ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայությամբ, տուժողների համար ապահովեն իրավաբանական աջակցությունից և իրավաբանական անվճար օգնությունից օգտվելու իրավունքը:

Հոդված 58 – Վաղեմության ժամկետներ

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի 36, 37, 38 և 39-րդ հոդվածների համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ ցանկացած վարույթ հարուցելու համար քրեական հետապնդման վաղեմության ժամկետը շարունակի հոսել տուժողի չափահաս դատնալուց հետո այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ և համաչափ կլինի խնդրո առարկա հանցագործության ծանրությանը՝ այն հաշվով, որպեսզի քրեական վարույթի արդյունավետ իրականացումը հնարավոր լինի տուժողի չափահաս դատնալուց հետո:

Գլուխ VII – Միգրացիա և ապաստան

Հոդված 59 – Կացության կարգավիճակ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի այն գոհերը, որոնց կացության կարգավիճակը կախված է ամուսինների կամ զուգընկերների՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, ունեցած կարգավիճակից, ամուսնալուծվելու կամ հարաբերությունը դադարելու դեպքում, առանձնակի դժվարություն ներկայացնող պայմանների առկայությամբ և դիմումի հիման վրա, ստանան կացության ինքնուրույն թույլտվություն՝ անկախ ամուսնության կամ հարաբերության տևողությունից: Կացության ինքնուրույն թույլտվություն տալու պայմանները և դրա տևողությունը սահմանվում են ներպետական օրենսդրությամբ:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի գոհերին տրվի նրանց ամուսինների կամ զուգընկերների՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, նկատմամբ ընթացող արտաքսման վարույթի կասեցմանը հասնելու հնարավորություն՝ այն հաշվով, որպեսզի իրենք կարողանան դիմել կացության ինքնուրույն թույլտվություն ստանալու համար:
3. Մասնակից պետությունները պետք է գոհերին տրամադրեն կացության նորոգվող թույլտվություններ՝ հետևյալ երկու իրավիճակի առանձին կամ միաժամանակյա առկայության դեպքում՝

ա. եթե իրավասու մարմինը գտնում է, որ տուժողի մնալն անհրաժեշտ է նրա անձնական դրության բերումով;

բ. եթե իրավասու մարմինը գտնում է, որ տուժողի մնալն անհրաժեշտ է նախաքննական կամ դատական վարույթի ընթացքում իրավասու մարմինների հետ համագործակցելու նպատակով:

4. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի հարկադիր ամուսնության զոհերը, ովքեր այլ երկիր են տարվել ամուսնանալու նպատակով և ովքեր դրա արդյունքում կորցրել են իրենց հիմնական բնակության վայր հանդիսացող երկրում ունեցած կացության կարգավիճակը, հնարավորություն ունենան վերականգնելու այն:

Հոդված 60 – Գենդերային հիմքով ապաստան ստանալու խնդրանքներ

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնությունը հնարավոր լինի ճանաչել որպես հետապնդում՝ Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951թմ Կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա մասի 2-րդ կետի իմաստով, և որպես ծանր հետևանքի դրսևորում, որը հիմք է տալիս լրացնող/սուբսիդիար պաշտպանություն իրականացնելու համար:
2. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի գենդերային բաղադրիչը հաշվի առնող մեկնաբանություն տրվի Կոնվենցիայի հիմքերից յուրաքանչյուրին, և եթե հաստատվի, որ հետապնդման վախը առկա է այդ մեկ կամ մեկից ավելի հիմքերի նկատմամբ, ապա փախստականի կարգավիճակը դիմումատուներին պետք է տրվի կիրառելի համապատասխան իրավական գործիքներին համապատասխան:
3. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապաստան հայցողների համար գենդերային բաղադրիչը հաշվի առնող ընդունման ընթացակարգեր և աջակցության ծառայություններ, ինչպես նաև գենդերային ուղեցույցներ և գենդերային բաղադրիչ ունեցող ապաստան տրամադրելու ընթացակարգեր ստեղծելու համար, ներառյալ փասխստականի կարգավիճակ տալու հարցի լուծումը և միջազգային պաշտպանության մասին դիմումները:

Հոդված 61 – Non-refoulement

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ non-refoulement սկզբունքը հարգելու ուղղությամբ, միջազգային իրավունքի ներքո իրենց ստանձնած պարտավորություններին համապատասխան:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի կանանց նկատմամբ բռնության զոհ հանդիսացող և պաշտպանության կարիք ունեցող անձինք որևէ պարագայում չվերադարձվեն մի երկիր, որտեղ նրանց կյանքին

սպառնալու է վտանգ կամ որտեղ նրանք կարող են ենթարկվել խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Գլուխ VIII – Միջազգային համագործակցություն

Հոդված 62 – Ընդհանուր սկզբունքներ

1. Մասնակից պետությունները պետք է է հնարավորինս լայն համագործակցություն ծավալել միմյանց միջև սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն և քաղաքացիական ու քրեական գործերով համագործակցության մասին միջազգային և տարածաշրջանային գործիքների, միասնական կամ փոխադարձ օրենսդրության և ներքին օրենքներով նախատեսվող կարգավորումների հիման վրա, նպատակ ունենալով՝
 - ա. սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելումը, դրանց դեմ պայքարը ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը;
 - բ. տուժողների համար պաշտպանություն ապահովելը և աջակցություն տրամադրելը;
 - գ. սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննություն և դատական քննություն իրականացնելը;
 - դ. մասնակից պետությունների դատական մարմինների կողմից արձակված քաղաքացիական և քրեական գործերով համապատասխան դատական ակտերը, այդ թվում՝ պաշտպանության կարգադրությունները կատարելը:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված որևէ հանցագործության զոհ հանդիսացող անձինք, հանցագործությունը տուժողի բնակության վայրի պետություն չհանդիսացող մասնակից պետության տարածքում կատարվելու դեպքում, հանցագործության մասին հաղորդումը կարողանան ներկայացնել իրենց բնակության վայրի պետության իրավասու մարմիններին:
3. Եթե որևէ մասնակից պետություն, որը քրեական գործերով փոխադարձ համագործակցությունը, հանձնումը և սույն Կոնվենցիայի մեկ այլ մասնակից պետության կողմից քաղաքացիական և քրեական գործերով կայացված դատական ակտերի կատարումը պայմանավորում է պայմանարգի առկայությամբ, փոխադարձ իրավական օգնության հայցում է ստանում այնպիսի մասնակից պետությունից, որի հետ նա չունի այդպիսի պայմանագիր, ապա այն կարող է սույն Կոնվենցիան դիտարկել որպես հիմք քրեական գործերով փոխադարձ համագործակցության, հանձնման և սույն Կոնվենցիայի մեկ այլ մասնակից պետության կողմից քաղաքացիական և քրեական գործերով կայացված դատական ակտերի կատարման նպատակով՝ սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների առնչությամբ:

4. Մասնակից պետությունները կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը և դրա պայքարը պետք է ձգտեն ընդգրկել երրորդ պետությունների համար իրականացվող աջակցության ծրագրերում, ներառյալ՝ երրորդ պետությունների հետ երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր կնքելը՝ գոհերի պաշտպանությունը, 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, խթանելու նպատակով:

Հոդված 63 – Վտանգի տակ գտնվող անձանց նկատմամբ միջոցներ

Եթե մասնակից որևէ պետություն, որը տիրապետում է այնպիսի տեղեկատվության, որը ողջամիտ հիմքեր է տալիս ենթադրելու, որ որևէ անձ գտնվում է սույն Կոնվենցիայի 36, 37, 38 և 39-րդ հոդվածներում նշված բռնության գործողությունների մեկ այլ մասնակից պետության տարածքում ենթարկվելու վերահաս վտանգի տակ, ապա այդ տեղեկատվությանը տիրապետող մասնակից պետությանը քաջալերվում է այդ տեղեկատվությունը անհապաղ փոխանցել այն մասնակից պետությանը, որտեղ այդ արարքները կարող են կատարվել՝ պաշտպանության համապատասխան միջոցների կիրառումը ապահովելու նպատակով: Համապատասխան դեպքերում, այս տեղեկատվությունը, վտանգված անձի շահերից ելնելով, պետք է մանրամասներ պարունակի պաշտպանության մասին գործող դրույթների վերաբերյալ:

Հոդված 64 – Տեղեկատվություն

1. Հայցվող մասնակից պետությունը Հայցող մասնակից պետությանը անհապաղ տեղյակ է պահում սույն գլխի դրույթների համաձայն կատարված գործողության վերջնական արդյունքի մասին: Հայցվող մասնակից պետությունը Հայցող մասնակից պետությանը անհապաղ տեղյակ է պահում նաև այն բոլոր հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հայցվող գործողության կատարումը կամ որոնց հետևանքով այդ գործողությունը, հավանական է, որ նշանակալիորեն ձգձգվի:
2. Մասնակից պետությունը, իր ներքին օրենսդրությամբ թույլատրվող սահմաններում, առանց նախապես հայցում ներկայացնելու, կարող է մեկ այլ մասնակից պետությանը փոխանցել իր սեփական քննության շրջանակներում ձեռք բերված տեղեկատվությունը, եթե գտնում է, որ այդ տեղեկատվության բացահայտումը ստացող պետությանը կարող է օգնել սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունները կանխելու, դրանց վերաբերյալ քրեական վարույթ կամ քրեական գործ հարուցելու և քրեական վարույթը կամ գործի քննությունը իրականացնելու գործում, կամ եթե այդ տեղեկատվությունը սույն գլխի դրույթների ներքո այդ մասնակից պետությանը հնարավորություն կտա դիմելու համագործակցության խնդրանքով:
3. Մասնակից պետությունը, որը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով ստանում է որևէ տեղեկատվություն, այդ տեղեկատվությունը պետք է հայտնի իր իրավասու մարմիններին՝ այն հաշվով, որպեսզի հարուցվեն անհրաժեշտ համարվող ընթացակարգերը կամ որպեսզի այդ տեղեկատվությունը հնարավոր լինի հաշվի առնել քաղաքացիական և քրեական համապատասխան վարույթների շրջանակներում:

Հոդված 65 – Տվյալների պաշտպանություն

Անհատական տվյալները պետք է պահպանվեն և օգտագործվեն մասնակից պետությունների կողմից “Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հետ կապված անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի (ETS No. 108) ներքո ստանձնած պարտավորություններին համապատասխան:

Գլուխ IX – Վերահսկողության մեխանիզմը

Հոդված 66 – Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով Փորձագիտական խումբը (GREVIO, ԳՐԵՎԻՈ)

1. Մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիայի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար պատասխանատու է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով Փորձագիտական խումբը (այսուհետ՝ “ԳՐԵՎԻՈ”):
2. ԳՐԵՎԻՈ-ն պետք է ունենա նվազագույնը 10 և առավելագույնը 15 անդամ՝ պահպանելով աշխարհագրական և գենդերային հավասարակշռությունը, ինչպես նաև ապահովելով բազմաոլորտ փորձառության առկայությունը: Նրա անդամներն ընտրվում մասնակից պետությունների Կոմիտեի կողմից՝ մասնակից պետությունների կողմից ներկայացված նրանց քաղաքացիների թվից ընտրված թեկնածուների ցանկից, չորս տարի ժամանակով՝ մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ:
3. Առաջին 10 անդամների ընտրությունը պետք է կատարվի սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Մյուս հինգ անդամների ընտրությունը պետք է կատարվի թվով 25-րդ վավերացումից կամ միանալուց հետո:
4. ԳՐԵՎԻՈ-ի անդամների ընտրության հիմքում պետք է դրվեն հետևյալ սզկբունքները՝
 - ա. նրանք պետք է ընտրվեն թափանցիկ ընթացակարգով՝ բարոյական բարձր հատկանիշներ ունեցող, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կամ տուժողներին աջակցություն և պաշտպանություն տրամադրելու ասպարեզում իրենց ձեռնահասությամբ հայտնի կամ սույն Կոնվենցիայով ընդգրկվող բնագավառներում մասնագիտական փորձառություն դրսևորած անձանց թվից;
 - բ. միննույն պետության քաղաքացի հանդիսացող երկու անձանց անդամությունը ԳՐԵՎԻՈ-ին արգելվում է;
 - գ. նրանք պետք է ներկայացնեն հիմնական իրավական համակարգերը;

դ. նրանք պետք է ներկայացնեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բնագավառում գործող տարբեր դերակատարների և գերատեսչությունների;

ե. նրանք հանդես են գալիս իրենց անձնական կարգավիճակով, անկախ են անկողնակալ իրենց գործառույթներն իրականացնելիս և կարող են արդյունավետորեն կատարել իրենց պարտականությունները:

5. ԳԲԵՎԻՌ-ի անդամների ընտրության կարգը որոշվում է Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից՝ մասնակից պետությունների հետ խորհրդակցություններ անցկացնելուց և նրանց միաձայն հավանությունը ստանալուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:
6. ԳԲԵՎԻՌ-ն հաստատում է իր սեփական կանոնակարգը:
7. 68-րդ հոդվածի 9-րդ և 14-րդ մասերով սահմանված կարգով այլ երկիր այցելող ԳԲԵՎԻՌ-ի անդամները և պատվիրակությունների մյուս անդամները օգտվում են սույն Կոնվենցիայի Հավելվածում ամրագրված արտոնություններից և անձեռնմխելիություններից:

Հոդված 67 – Մասնակից պետությունների Կոմիտեն

1. Մասնակից պետությունների Կոմիտեն կազմված է Կոնվենցիայի մասնակից պետությունների ներկայացուցիչներից:
2. Մասնակից պետությունների Կոմիտեն գումարվում է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից: Մասնակից պետությունների կոմիտեն առաջին անգամ գումարվում է Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ ԳԲԵՎԻՌ-ի անդամների ընտրության նպատակով: Այնուհետև կոմիտեի նիստերը գումարվում են մասնակից պետությունների մեկ երրորդի, մասնակից պետությունների Կոմիտեի Նախագահի կամ Գլխավոր քարտուղարի խնդրանքով:
3. Մասնակից պետությունների Կոմիտեն հաստատում է իր սեփական կանոնակարգը:

Հոդված 68 – Ընթացակարգը

1. Մասնակից պետությունները Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին են ներկայացնում ԳԲԵՎԻՌ-ի կողմից կազմված հարցաշարի հիման վրա նախապատրաստված և ԳԲԵՎԻՌ-ի քննարկմանը դրվող իրենց զեկույցը՝ օրենսդրական և այլ բնույթի այն միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են սույն Կոնվենցիայի դրույթների կատարման ուղղությամբ:
2. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն ներկայացված զեկույցը ԳԲԵՎԻՌ-ի կողմից քննարկվում է համապատասխան մասնակից պետության ներկայացուցչի հետ միասին:

3. Գնահատման հաջորդ գործընթացները բաժանվում են փուլերի, որոնց տևողությունը որոշվում է ԳԲՎԻՌ-ի կողմից: Յուրաքանչյուր փուլի սկզբում ԳԲՎԻՌ-ն ընտրում է այն հատուկ դրույթները, որոնց վրա պետք է հիմնվի գնահատումը, և ուղարկում հարցաշարը:
4. ԳԲՎԻՌ-ն որոշում է այն միջոցները, որոնք առավել անհրաժեշտ են վերահսկողության այս գործընթացն իրականացնելու համար: Մասնավորապես, այն կարող է հարցաշար մշակել գնահատման յուրաքանչյուր փուլի համար, որը կձառայի որպես մասնակից պետությունների կողմից կատարման նկատմամբ գնահատման ընթացակարգի հիմք: Հարցաշարը պետք է ուղարկվի մասնակից բոլոր պետություններին: Մասնակից պետությունները պետք է պատասխանեն այդ հարցաշարին, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ ԳԲՎԻՌ-ի ցանկացած խնդրանքին:
5. ԳԲՎԻՌ-ն Կոնվենցիայի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը կարող է ստանալ ՀԿ-ներից, քաղաքացիական հասարակությունից, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտներից:
6. ԳԲՎԻՌ-ն պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այն տեղեկատվությանը, որն առկա է սույն Կոնվենցիայի առարկայի մեջ մտնող հարցերի վերաբերյալ տարածաշրջանային և միջազգային այլ գործիքներում և մարմինների մոտ:
7. Գնահատման յուրաքանչյուր փուլի համար հարցաշար մշակելիս, ԳԲՎԻՌ-ն պետք է պատշաճ կերպով հաշվի առնի այն տվյալները և ուսումնասիրությունները, որոնք մասնակից պետություններում, համապատասխանաբար՝ հավաքվել և կատարվել են սույն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի կարգով:
8. ԳԲՎԻՌ-ն Կոնվենցիայի կատարման վերաբերյալ տեղեկատվություն կարող է ստանալ Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարից, Խորհրդարանական Ասամբլեայից և Եվրոպայի Խորհրդի համապատասխան մասնագիտացված մարմիններից, որոնք ստեղծված են այլ միջազգային գործիքների հիման վրա: Այդ մարմիններին ներկայացված գանգատները և վերջիններիս քննության արդյունքները պետք է մատչելի դարձվեն ԳԲՎԻՌ-ի համար:
9. Ստացված տեղեկատվությունը ոչ բավարար լինելու կամ սույն հոդվածի 14-րդ կետով նախատեսված դեպքերում ԳԲՎԻՌ-ն կարող է որպես լրացուցիչ միջոց այցելություններ կազմակերպել այլ երկրներ՝ ազգային իշխանությունների համագործակցությամբ և անկախ ազգային փորձագետների աջակցությամբ: Այդ այցերի ընթացքում ԳԲՎԻՌ-ին կարող են աջակցել առանձին ոլորտների մասնագետներ:
10. ԳԲՎԻՌ-ն պատրաստում է զեկույցի նախագիծ, որը պարունակում է վերլուծություններ գնահատման հիմքում ընկած դրույթների կատարման վերաբերյալ, ինչպես նաև՝ առաջարկություններ ու նախագծեր այն եղանակների վերաբերյալ, որոնք տվյալ մասնակից պետությունը կարող է ընտրել

արձանագրված հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ: Ձեկույցի նախագիծն ուղարկվում է գնահատում անցնող տվյալ մասնակից պետությանը՝ վերջինիս մեկնաբանությունները ստանալու նպատակով: Այդ մեկնաբանությունները ԳՐԵՎԻՌ-ի կողմից պետք է հաշվի առնվեն իր զեկույցը հաստատելու ժամանակ:

11. Ստացված ամբողջ տեղեկատվության և մասնակից պետությունների կողմից ներկայացված մեկնաբանությունների հիման վրա, ԳՐԵՎԻՌ-ն հաստատում է իր զեկույցը և եզրակացությունները՝ համապատասխան մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայի դրույթների կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ: Այս զեկույցն ու եզրակացությունները ուղարկվում են համապատասխան մասնակից պետությանը և Մասնակից պետությունների Կոմիտեին: ԳՐԵՎԻՌ-ի զեկույցն ու եզրակացությունները հրապարակվում են դրանց հաստատման պահի խմբագրությամբ՝ համապատասխան մասնակից պետության կողմից դրանց վերաբերյալ հետագայում արված մեկնաբանությունների հետ միասին:
12. Առանց սույն հոդվածի 1-8-րդ մասերով նախատեսված ընթացակարգը սահմանափակելու, Մասնակից պետությունների Կոմիտեն, ԳՐԵՎԻՌ-ի զեկույցի և եզրակացությունների հիման վրա, կարող է ընդունել հանձնարարականներ՝ (ա) այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկի համապատասխան մասնակից պետությունը՝ ԳՐԵՎԻՌ-ի եզրակացություններն ի կատար ածելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում՝ նշելով դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ժամկետը, և (բ) հանձնարարականներ Կոնվենցիայի պատշաճ կատարումն ապահովելու համար համագործակցությունը խթանելու վերաբերյալ:
13. Եթե ԳՐԵՎԻՌ-ի կողմից վստահելի տեղեկատվություն է ստացվում այն մասին, որ առկա է այնպիսի իրավիճակ, որը Կոնվենցիայի ծանր խախտումները կանխելու կամ դրանց դրսևորման ծավալը կամ քանակը նվազեցնելու համար պահանջում է անհապաղ արձագանքում, ապա այն կարող է պահանջել արտակարգ զեկույցի անհապաղ տրամադրում՝ այն միջոցների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են կանանց նկատմամբ բռնության գործողությունների որևիցե ծանր, մասայական կամ կայուն դրսևորումները կանխելու նպատակով:
14. ամապատասխան մասնակից պետության կողմից ներկայացված, ինչպես նաև իր տրամադրության տակ եղած ցանկացած այլ վստահելի տեղեկատվության հիման վրա, ԳՐԵՎԻՌ-ն իր մեկ կամ մեկից ավելի անդամների կարող է օժտել հետաքննություն անցկացնելու և ԳՐԵՎԻՌ-ին անհապաղ զեկույցելու լիազորությամբ: Տվյալ մասնակից պետության թույլտվության և համաձայնության դեպքում այդ հետաքննությունը կարող է ներառել նաև այցելությունը այդ պետության տարածք:
15. Սույն հոդվածի 14-րդ մասում նշված հետաքննության հետևությունների ուսումնասիրության հիման վրա, ԳՐԵՎԻՌ-ն դրանք փոխանցում է համապատասխան մասնակից պետությանը և անհրաժեշտության դեպքում՝ Մասնակից պետությունների կոմիտեին և Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեին՝ բոլոր մեկնաբանություններով և հանձնարարականներով հանդերձ:

Հոդված 69 – Ընդհանուր բնույթի հանձնարարականներ

Անհրաժեշտության դեպքում, ԳԲՎԻՌ-ն կարող է ընդունել սույն Կոնվենցիայի կատարման վերաբերյալ ընդհանուր բնույթի հանձնարարականներ:

Հոդված 70 – Խորհրդարանական մասնակցությունը վերահսկողության գործընթացին

1. Ազգային խորհրդարանները պետք է ներգրավվեն սույն Կոնվենցիայի կատարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների կատարման նկատմամբ վերահսկողության գործընթացին:
2. Մասնակից պետությունները ԳԲՎԻՌ-ի զեկույցները ներկայացնում են իրենց ազգային խորհրդարաններին:
3. Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Ասամբլեան պետք է ներգրավված լինի Կոնվենցիայի կատարման բոլոր գործողությունների կանոնավոր ամփոփմանը:

Գլուխ X – Հարաբերակցությունը այլ միջազգային իրավական գործիքների հետ

Հոդված 71 – Հարաբերակցությունը այլ միջազգային իրավական գործիքների հետ

1. Սույն Կոնվենցիան չի սահմանափակում այն պարտավորությունները, որոնք բխում են սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների առկա կամ հնարավոր մասնակցությամբ այն միջազգային գործիքներից, որոնք պարունակում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերին վերաբերող դրույթներ:
2. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները սույն Կոնվենցիայի կարգավորման առարկա հարցերի շուրջ միմյանց միջև կարող են կնքել երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր կամ ցանկացած այլ իրավական գործիքներ՝ Կոնվենցիայի դրույթները լրացնելու կամ ամրապնդելու կամ դրանում մարմնավորված սկզբունքների կիրառումը ապահովելու նպատակով:

Գլուխ XI – Կոնվենցիայի փոփոխությունները

Հոդված 72 – Փոփոխություններ

1. Սույն Կոնվենցիայի փոփոխության ցանկացած առաջարկ մասնակից որևէ պետության կողմից հաղորդվում է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին և վերջինիս կողմից՝ Եվրոպայի Խորհրդի անդամ բոլոր երկրներին, ստորագրած և մասնակից բոլոր պետություններին, Եվրոպական Միությանը և ցանկացած այլ պետությանը, որին 75-րդ հոդվածի դրույթների համաձայն, հրավիրվել է ստորագրելու սույն Կոնվենցիան, և ցանկացած այլ պետությանը, որին 76-րդ հոդվածի դրույթների համաձայն, հրավիրվել է միանալու սույն Կոնվենցիային:
2. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն ուսումնասիրվում է առաջարկված փոփոխությունը և Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների հետ խորհրդակցելուց հետո, կարոց է ընդունել

փոփոխությունը Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի (դ) կետով նախատեսված ձայների մեծամասնության առկայությամբ:

3. Նախարարների կոմիտեի կողմից, սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդունված ցանկացած փոփոխության տեքստ ուղարկվում է մասնակից պետություններին՝ հաստատման համար:
4. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում մասնակից բոլոր պետությունների կողմից այն հաստատելու մասին Գլխավոր քարտուղարին տեղյակ պահելու պահից հետո մեկամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Գլուխ XII – Եզրափակիչ դրույթներ

Հոդված 73 – Սույն Կոնվենցիայի ներգործությունը

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում ներքին օրենսդրության և պարտադիր միջազգային գործիքների այն դրույթների ներգործությունը, որոնք արդեն մտել են կամ կարող են մտնել ուժի մեջ և որոնց համաձայն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի շրջանակներում անձանց համար ապահովված են կամ կապահովվեն ավելի բարենպաստ իրավունքներ:

Հոդված 74 – Վեճերի լուծումը

1. Սույն Կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանման առթիվ ծագած ցանկացած վեճի կողմ հանդիսացող մասնակից պետությունները նախևառաջ պետք է ձգտեն վեճը լուծել բանակցությունների, խորհրդակցությունների, արբիտրաժի և միմյանց միջև բարեկամական կարգավորման ցանկացած այլ եղանակով:
2. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է նախատեսել ընթացակարգեր, որոնք մասնակից պետությունների կողմից, փոխադարձ համաձայնությամբ, կարող են օգտագործվել Կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանման առթիվ ծագած վեճերի դեպքում:

Հոդված 75 – Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար և անդամ չհանդիսացող այն պետությունների ստորագրման համար, որոնք մասնակցել են դրա մշակմանը և Եվրոպական Միության համար:
2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:
3. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 2-րդ մասի դրույթներին համապատասխան սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին տասներորդ պետության կողմից, որոնցից առնվազն ութը Եվրոպայի Խորհրդի

անդամ պետություններ են, իր համաձայնությունն արտահայտելու պահից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ցանկացած պետության կամ Եվրոպական Միության համար, որը հետագայում կհայտնի Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին իր համաձայնությունը, Կոնվենցիան ուժի է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման վավերագիրն ի պահ հանձնելու պահից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 76 – Կոնվենցիային միանալը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն, սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն հավանությունը ստանալուց հետո, կարող է հրավիրել Եվրոպայի Խորհրդի ցանկացած անդամ չհանդիսացող և սույն Կոնվենցիայի մշակմանը չմասնակցած պետությանը միանալու սույն Կոնվենցիային՝ պայմանով, որ այդպիսի որոշումն ընդունված է Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի (դ) կետով նախատեսված ձայների մեծամասնությամբ, իսկ Կոմիտեի անդամության իրավունք ունեցող մասնակից պետությունների ներկայացուցիչների կողմից՝ միաձայն:
2. Արձանագրությանը միացող յուրաքանչյուր պետության համար այն ուժի մեջ է մտնում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելու պահից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 77 – Տարածքային կիրառումը

1. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական Միությունը կարող են ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Կոնվենցիան:
2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած հետագա պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել որևէ այլ տարածքի նկատմամբ, որը նշված է հայտարարության մեջ և որի միջազգային հարաբերությունների համար այն պատասխանատու է կամ որի անունից այն լիազորված է ստանձնելու պարտավորություններ: Նման տարածքի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու պահից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:
3. Նախորդ երկու կետի հիման վրա արված ցանկացած հայտարարություն կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ հետ վերցվել այդ հայտարարության մեջ նշված որևէ տարածքի առնչությամբ: Հետ վերցնելը ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու պահից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հողված 78 – Վերապահումներ

1. Սույն Կոնվենցիայի որևէ դրույթից վերապահում անել չի թույլատրվում՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերի:
2. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական Միությունը կարող են ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հայտարարել, որ իրենց իրավունք են վերապահում չկիրառել կամ միայն առանձին դեպքերում կամ պայմաններում կիրառել հետևյալ հոդվածներով նախատեսված դրույթները՝
 - 30-րդ հոդվածի 2-րդ մաս;
 - 44-րդ հոդվածի 1-ին մասի (ե) կետ, 3-րդ և 4-րդ մասեր;
 - 55-րդ հոդվածի 1-ին մաս՝ 35-րդ հոդվածով նախատեսված ոչ ծանր հանցագործությունների առնչությամբ;
 - 58-րդ հոդված՝ 37-րդ, 38-րդ և 39-րդ հոդվածների առնչությամբ;
 - 59-րդ հոդված:
3. Յուրաքանչյուր պետություն կամ Եվրոպական Միությունը կարող են ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հայտարարել, որ իրենց իրավունք են վերապահում քրեական պատիժների փոխարեն, ոչ քրեական բնույթի պատժամիջոցներ նախատեսել 33-րդ և 34-րդ հոդվածներում նշված վարքագծի դրսևորումների համար:
4. Յուրաքանչյուր կողմ կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հրաժարվել կատարած վերապահումից՝ մասնակիորեն կամ ամբողջությամբ: Այդ հայտարարությունն ուժի մեջ է մտնում հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից:

Հողված 79 – Վերապահումների վավերականությունն ու վերանայումը

1. 78-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասով սահմանված վերապահումներն ունեն 5 տարվա վավերականություն՝ սկսած սույն Կոնվենցիան տվյալ մասնակից պետության նկատմամբ ուժի մեջ մտնելու օրվանից: Այնուամենայնիվ, այդ վերապահումները կարող են երկարացվել նույն ժամանակով:
2. Արված վերապահման գործողության ժամկետը լրանալուց տասնութ ամիս առաջ, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը այդ մասին ծանուցում է համապատասխան մասնակից պետությանը: Ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, այդ մասնակից պետությունը Գլխավոր քարտուղարին ծանուցում է իր կողմից արված վերապահումը պահպանելու, փոփոխելու կամ դրանից հրաժարվելու մասին: Տվյալ մասնակից պետության կողմից որևէ ծանուցում չստանալու դեպքում, Գլխավոր քարտուղարը այդ մասնակից պետությանը տեղեկացնում է, որ վերջինիս կողմից արված վերապահման ժամկետը համարվում է ինքնաբերաբար երկարացված վեց ամիս ժամանակով:

Համապատասխան պետության կողմից նախքան այդ ժամկետը լրանալը վերապահումը պահպանելու կամ փոփոխելու իր մտադրության մասին չճանուցելու դեպքում, վերապահումը կորցնում է իր ուժը:

3. Եթե մասնակից պետությունը վերապահում է կատարում 78-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն, ապա այն, նախքան կատարված վերապահման երկարացումը կամ համապատասխան խնդրանքի առկայությամբ, պետք է ԳԲԵՎԻՈ-ին բացատրություն ներկայացնի՝ վերապահման պահպանումը հիմնավորող պատճառների շարադրմամբ:

Հոդված 80 – Անդամությունը չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է ցանկացած ժամանակ Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով դադարեցնել իր անդամությունը սույն Կոնվենցիային:
2. Այդպիսի հայտարարությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու պահից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 81 – Ծանուցումներ

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին, սույն Կոնվենցիայի մշակմանը մասնակցած անդամ չհանդիսացող պետություններին և սույն Կոնվենցիան ստորագրած կամ մասնակից ցանկացած պետությանը, Եվրոպական Միությանը և ցանկացած այլ պետության, որին հրավիրվել է միանալու սույն Կոնվենցիային, ծանուցում է.

ա. ստորագրման յուրաքանչյուր դեպքի մասին ;

բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելու յուրաքանչյուր դեպքի մասին ;

գ. սույն Կոնվենցիան՝ 75-րդ և 76-րդ հոդվածների համաձայն ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին ;

դ. 72-րդ հոդվածի համաձայն կատարված ցանկացած փոփոխության մասին և նման փոփոխությունն ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին ;

ե. 78-րդ հոդվածի համաձայն արված յուրաքանչյուր վերապահման և վերապահումից հրաժարվելու ցանկացած դեպքի մասին ;

զ. 80-րդ հոդվածի համաձայն անդամությունը չեղյալ հայտարարելու ցանկացած դեպքի մասին ;

է. սույն Կոնվենցիային առնչվող յուրաքանչյուր այլ փաստաթղթի, հայտարարության, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի վկայություն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստամբուլում , 2011 թվականի Մայիսի 11-ին, մեկ օրինակով, անգլերենով և ֆրանսերենով, երկու տեքստ էլ՝ հավասարազոր, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի արխիվին: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի Խորհրդի անդամ բոլոր պետություններին, սույն Կոնվենցիայի մշակմանը մասնակցած անդամ չհանդիսացող պետություններին, Եվրոպական Միությանը և ցանկացած այլ պետության, որին հրավիրվել է միանալու սույն Կոնվենցիային:

Հավելված – Արտոնություններ և անձեռնմխելիություններ (Հոդված 66)

1. Սույն հավելվածը կիրառվում է Կոնվենցիայի 66-րդ հոդվածում նշված ԳՐԵՎԻՈ-ի անդամների, ինչպես նաև այլ երկիր այցելող պատվիրակությունների այլ անդամների նկատմամբ: Սույն հավելվածի նպատակներից ելնելով, «այլ երկիր այցելող պատվիրակությունների այլ անդամներ» հասկացությունը ներառում է Կոնվենցիայի 68-րդ հոդվածի 9-րդ մասում հիշատակվող ազգային անկախ փորձագետներին և մասնագետներին, Եվրոպայի Խորհրդի աշխատակազմի անդամներին և Եվրոպայի Խորհրդի կողմից վարձված այն թարգմանիչներին, ովքեր ուղեկցում են ԳՐԵՎԻՈ-ին այլ երկիր կատարվող այցելությունների ընթացքում:
2. ԳՐԵՎԻՈ-ի անդամներն ու այլ երկիր այցելող պատվիրակությունների այլ անդամները, այդ այցելությունների նախապատրաստման և անցկացման հետ կապված, ինչպես նաև դրանից հետո իրենց գործառույթներն իրականացնելիս և այդ գործառույթների իրականացման կապակցությամբ ճանապարհորդելիս, օգտվում են հետևյալ արտոնություններից և անձեռնմխելիություններից
 - ա. անձեռնմխելիություն ձեռքակալումից կամ կալանավորումից և անձնական բեռի վրա կալանք դնելուց, և անձեռնմխելիություն պաշտոնեական կարգավիճակում նրանց կողմից ասված կամ գրված խոսքերի կամ կատարված գործողությունների առնչությամբ ցանկացած իրավական գործընթացից;
 - բ. նրանց վրա չի տարածվում իրենց բնակության երկիր մուտք գործելու և երկրից դուրս գալու ազատ տեղաշարժի որևէ սահմանափակում, նաև՝ այն երկիր մուտք գործելու և երկրից դուրս գալու որևէ սահմանափակում, որտեղ նրանք կատարում են իրենց պարտականությունները, կամ որպես օտարերկրացի հաշվառվելու որևէ սահմանափակում այն երկրում, որի տարածքով նրանք անցնում են իրենց պարտականությունների կատարման կապակցությամբ:
3. Իրենց գործառույթների կատարման կապակցությամբ կատարվող ուղևորությունների ընթացքում, ԳՐԵՎԻՈ-ի անդամներին և այլ երկիր այցելող պատվիրակությունների այլ անդամներին մաքսային և արտարժույթային հսկողության ոլորտում տրամադրվում են այն նույն արտոնությունները, որոնք տրամադրվում են օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին՝ ժամանակավոր պաշտոնեական պարտականություններ կատարելու ընթացքում:
4. Այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են Կոնվենցիայի կատարման վերաբերյալ ԳՐԵՎԻՈ-ի և այլ երկիր այցելող պատվիրակությունների այլ անդամների կողմից կատարված գնահատմանը, անձեռնմխելի են, որքանով որ դրանք վերաբերում են ԳՐԵՎԻՈ-ի գործերին: ԳՐԵՎԻՈ-ի պաշտոնական թղթակցությունը և ԳՐԵՎԻՈ-ի անդամների և այլ երկիր այցելող պատվիրակությունների այլ անդամների պաշտոնական հաղորդակցությունները չեն կարող ուշացվել կամ ենթարկվել գրաքննության:
5. ԳՐԵՎԻՈ-ի անդամներին և այլ երկիր այցելող պատվիրակությունների այլ անդամներին խոսքի լիակատար ազատություն և իրենց պարտականություններն իրականացնելիս լիակատար անկախություն ապահովելու նպատակով, իրենց

պարտականությունների կատարման կապակցությամբ նրանց կողմից ասված կամ գրված խոսքերի ու կատարված բոլոր գործողությունների համար ցանկացած իրավական գործընթացի առնչությամբ անձեռնմխելիությունը պահպանվում է՝ անկախ այդ անձանց կողմից այդ պարտականությունների կատարումը դադարեցնելու հանգամանքից:

6. Արտոնություններն ու անձեռնմխելիությունները սույն հավելվածի 1-ին մասում հիշատակված անձանց տրամադրվում են ոչ թե նրանց անձնական շահի, այլ ԳՐԵՎԻՈ-ի շահերից բխող իրենց գործառույթների անկախ կատարումը երաշխավորելու նպատակով: Սույն հավելվածի 1-ին մասում հիշատակված անձանց անձեռնմխելիություններից զրկելը կատարվում է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից յուրաքանչյուր դեպքում, երբ վերջինիս կարծիքով, անձեռնմխելիությունը կխոչընդոտի արդարադատության իրականացմանը և եթե զրկումը չի վնասում ԳՐԵՎԻՈ-ի շահերին: